



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ ԹԺ — ՇՐՋԱՆ ԻՐ.

1890

ՏԱՐԻ ԻԳ. ՀՈԿՏԵՄ. 1.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՄԱՐԴԵՐ ԵՒ ԻՐ ԲՆԱԿԱՆ ՈՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԷԱԿՈՒԹԻՒՆԸ.

Սովորութիւն է ասել՝ մարդս բաղկացած է երկու մասից՝ Հոգուց և մարմնից։ Սակայն դորանով մարդու իսկական էակութիւնը դեռ չէ որոշուում. զի չէ կենդանիներն էլ մի ոգի ունին. իսկ մարդու մարմինը չէ որ մի բոլորովին այլ Հոգեկան կեանքի համար է կազմած քան կենդանիներինը։ Այս կրկին բաժանման մէջ չէ մարդու առանձնայատկութիւնը։ Երկրիս վերայ բոլոր միւս էակներէից

մեզ տարբերողը այն է, որ մենք միայն աշխարհի հետ չենք յարաբերութեան մէջ դրուած, այլ և Աստուծոյ հետ, և որ այս յարաբերութեան համար նոյնքան լաւ տրամադրուած և կազմակերպուած ենք, որքան և աշխարհի հետ ունեցած մեր յարաբերութեան համար: Մեր էակութեան առանձնութիւնը նորանումն է, որ այս կը կնակի դիրքը գրաւած ունինք:

Մենք պատկանում ենք աշխարհին և Աստուծոյ. աշխարհը ի մի է ամփոփուում մարդու մէջ՝ իբրեւ իւր նպատակակէտն ու կնիքը. և կրկին՝ Աստուած արտացոլում է մարդու մէջ՝ իբրեւ իւր պատկերի մէջ: Այս են այն երկու կողմերը, որ մարդ կրում է իւր մէջ: Կանք առնենք այստեղ մի վայրկեան:

«Արասցուք մարդ» — այս խօսքերով է սկսում Ս. Գրքը մարդու ստեղծագործութիւնը: Երկրային արարածների աստիճանական ամբողջ կարգը մարդոց առաջ եկել անցել էր, այժմ ահա արարչութիւնն իւր վերջին քայլն է անում մարդով. նորանով կնքում է ստեղծագործութիւնը: Մարդս ամփոփումն է իրենից առաջ եկող աշխարհի: Մարդու գաղափարն անցնում է բոլոր նախընթաց աստիճաններով, նոքա բոլորը իսկապէս յաւելուածներ են մարդու նկատմամբ, իսկ նոյն ինքն մարդու մէջ գտնում է արդէն այդ գաղափարն իւր իրականութիւնը: Մենք կարող ենք ասել, արարած աշխարհը մաս մաս բաժանած մարդն է, մարդը՝ ամփոփ աշխարհը: Այս է Ս. Գրքի հայեցողութիւնը, որ և արտայայտուած է այն խօսքի մէջ, որով սկսում է մարդու ստեղծագործութիւնը և վերջանում երկրային միւս արարածներինը: «Արասցուք մարդ» — սակայն առաջ է տանում Աստուծոյ խօսքը — «ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան» և Աստուած կամենում է մարդու մէջ իւր կենդանագիրը տալ: Ամբողջ աշխարհը մի հայելի է Աստուծոյ, նորա զօրութեան և իմաստութեան. բայց նորա իսկական էակութեան համար պէտք էր մի արարածական կենդանագիր տալ մարդով: Նորա մէջ Աստուած ինքը արտայայտել է կամենում և մարդու հոգին Աստուծոյ հայելի պէտք է լինի, նորա պատկերը և նմանութիւնը պէտք է կրէ իւր մէջ, դէպի Նա պէտք է դարձած լինի իւր երեսը, նորա առաջ բաց իւր սիրտը՝ և լի նրանով:

Այս է ուրեմն Ս. Գրքի հայեցողութիւնը, որ մենք կրկնակի դիրք բռնած ունինք. պատկանում ենք աշխարհին իբրեւ նորա կնիք, պատկանում ենք Աստուծոյ իբրեւ նորա պատկեր:

Մեզ շրջապատող բնութիւնը կարեւորութեան աշխարհն է, բայց Աստուած ազատութիւն է: Մարդու մէջ իբար են հանդիպում այն երկու աշխարհները՝ կարեւորութեան աշխարհն՝ և ազատութեան աշխարհը:

Պատմութեան մէջ նկատելի է կարեւորութեան և ազատութեան գուղընթաց գործունէութիւնը. իսկ թէ ինչպէս հասկանալ պէտք է այդ գործակցութիւնը՝ մի գաղտնիք է համարուում: Կարեւորութիւն և ազատութիւն գուղընթաց են պատմութեան մէջ, որովհետեւ նոքա միացած են մարդու մէջ. զի պատմութիւնն ևս ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ մարդու կերպաւորութիւնը:

Մենք ունինք մեր մէջ՝ մեր բնութեան մէջ կարեւորութեան մի կողմ:

Մեզ շրջապատող բնութիւնը իւր կրկնութիւնն ունի մեր մէջ՝ մեր մարդկային բնութեան մէջ, իւրաքանչիւրի համար առանձնայատուկ եղանակով: Ոչ մի մարդու մէջ միայն վերցրած մարդկային բնութիւնը կատարելութեամբ չէ ներկայանում. մենք բոլորս մասնակից ենք միայն նորանում: Մին աւելի ճոխ, միւսն աւելի աղքատ բնութիւն ունի. հոգւոյ ձիրքերը և կարողութիւնները զանազանա-կերպ են բաժանուած, մարդկային բնութեան տարրերը տարբեր կերպերով են բազաղրուած: Ամեն մէկը աւելի կամ՝ պակաս միակողմանի մի երեւոյթ է միայն մարդու էակութեան: Ոչ ոք ամենակողմանի մարդ չէ, և ոչ իսկ ամենարնգունակը. իւրաքանչիւրն իւր սահմաններն ունի: Ուղիղ գործանում է նաև մեր դէպի միմեանց ունեցած հետաքրքրութեան հիմքը, որ մարդկային բնութեան ճոխութիւնն իւրաքանչիւրի մէջ առանձնայատուկ կերպով է երևան գալիս, որ մենք բոլորս զանազանակերպ անհատականութիւններ ենք: Այս անհատականութիւնն է այն առանձինն, որ մենք ունինք՝ մի ձիրք, որ ստացել ենք ի բնէ և որ պահպանել ու զարգացնել մեր պարտքն է: Այս մեր առանձնայատկութիւնը մենք ինքներս չենք մեզ տալիս, նա տրուած է մեզ: Մենք կարող ենք այն կերպաւորել

և զարգացնել, կամ թէ չէ անգարգացած թողնել. մենք կարող ենք նորան նիւթ մատակարարել կամ յետ քաշել. այն ամենը, ինչ որ մենք սովորում ենք, ինչ որ տեղեկանում ենք կամ կենքի փորձով ճանաչում՝ կարող ենք ընդունել մեր մէջ և մեր սեփական էականութեան հոգեւոր սնունդը դարձնել և այսպէս ճիւղացնել նրան: Ասկայն նոյն իսկ մեր էականութեան հիմքը փոխել մենք չենք կարող, նա տրուած է մեզ: Ով զուրկ է երեւակայութիւնից, այդպէս էլ մընում է ամբողջ կենեքում, և ով որ բանաստեղծութեան ձիրք չունի՝ բոլոր ճիգն ու վարժութիւնները ի զուր են: Նա բանաստեղծ չի դառնայ ինչքան էլ որ ոտանաւորները յօրինէ: Տաղանդ կերպաւորել կարող ենք մենք, բայց ոչ մի ջանք, ոչ մի աշխատութիւն հանձարին փոխարինել չէ կարող: Ամեն մէկի համար սահմաններ կան քաշած, որոնք անցնել նա չէ կարող: Մենք կաշկանդուած ենք, մենք անազատ ենք:

Եւ մենք պէտք է այսպէս լինենք, զի միջոց ենք մի բարձրագոյն կեանքի ձեռքին: Միթէ իշխանութիւն չունի բրուտը, ասում է Պօղոս առաքեալը (Հռոմ. Թ. 9), նոյն կաւից մի աման պատուոյ համար շինել, միւսը տնպատուութեան: Աստուած բրուտն է, մենք կաւը. նա կազմում և գործ է դնում մեզ ինչպէս իրեն հաճոյ է՝ նայելով թէ ինչ բանի համար պէտք կարող ենք գալ աշխարհքի և նորա պատմութեան մեծ տնտեսութեան մէջ: Իւրաքանչիւրը իւր տեղն ունի, որ Աստուած նշանակել է նորա համար, մարդկութեան ամբողջական կազմածի մէջ: Ըստ այսմ կազմում է մեզ Աստուած, ըստ այսմ առաջնորդում մեզ:

Միայն մեր բնական առանձնայատկութիւնը չէ մեզնից անկախ՝ մեր կենաց բաղդն ևս մեծ մասամբ մեր ձեռքին չէ: Ասում են այո, ամեն մարդ իւր բաղդի տէրն է, սակայն մենք բոլորս շատ լաւ գիտենք, թէ ինչ սահմանափակ մտքով է այդ ճշմարիտ: Ով կարող է անձամբ որոշել այն արտաքին պայմանները, որոնց մէջ ծնուած ու մնում է նա: Եւ ինչքան, ինչքան շատ բան մեր ամբողջ աշխարհային բաղդի համար կախումն ունի դոցանից: Մասնաւորի այստեղ ունեցած ազդեցութիւնը ամենանեղ սահմանների մէջ է միայն տարածուում, իսկ այն, ինչ որ մենք դիպուած կամ բաղդ ենք անուա-

նում՝ յայտնի է թէ ինչ մեծ դեր է խաղում: Բաւական է միայն վաճառականներին յիշել: Ինչքան էլ խելօք տեսած լինի մէկը իւր հաշիւը — անգամ ամենախելօքի ձեռքին չէ ելքը: Քանի քանի միջնադէպներ կարող են առաջ դալ, որ ամեն հաշիւ ի դերեւ են հանում: Այս նոյնը կրկնուում է բոլոր դասակարգերի և բոլոր կեանքի պայմանների մէջ:

Ի մի բան, ուր որ էլ նայինք՝ թէ մեր էակութեան բնական հիմունքներին, թէ այն այլ և այլ յարաբերութիւններին, որոնց մէջ գտնուում ենք, թէ մեր կենաց բաղդին՝ ամենուրեք սահմաններ ենք տեսնում մեր շուրջը գծած, որ մենք ընդարձակել կարող ենք, բայց ոչ անցնել. ամենուրեք կարեւորութեան մի օրէնքի ներքոյ ենք տեսնում մեզ, որ մեր վերայից թօթափել չենք կարող: Մենք միջոց ենք մի բարձրագոյն Խոկի ձեռքում, միջոց՝ որ թոյլ պիտի տայ գործ դնել իրեն աւելի ընդհանուր նպատակների համար, թուանշաններ տիեզերական պատմութեան մեծ հաշուեկշռի մէջ, զի սուրա վերայ և հաստատուած է պատմութեան կապակցութիւնը:

Կարծեմ ուղիղ ըմբռնած պիտի լինիմ ձեր զգացումը, երբ ասեմ. Դուք մինչև այստեղ հետեւեցիք ինձ, ընթերցող, որ, սակայն հետեւեցիք մի որոշ ներքին ընդդիմութեամբ հանդերձ: Դուք պէտք է խոստովանէք, որ բոլոր այս ասածներս ճշմարիտ են, բայց զգում էք նաև, որ ամբողջ ճշմարտութիւնը չէ այդ: Եւ դուք իրաւունք ունիք. սա չէ ամբողջ մարդը: Թէ արդեօք չնչին թէ հարուստ ընդունակութեանց տէր ենք, բանաստեղծական թէ լուրջ տրամադրութիւն ունինք, յաջողակ թէ անյաջող պայմանների մէջ ենք գտնուում կամ առաջ գնում. այս ամենը չէ որոշում հիմնովին մեր ինչ լինելը, դորա մէջ չէ մեր այն նիւթն, որ մենք գործ ենք դնում, այն ատաղձը, որով կանգնում ենք մեր կեանքի շէնքը — մի տուն աւելի լաւ, միւսը աւելի աննշան նիւթից է շինած — չէ՞ սակայն մենք ինքներս ենք, որ այդ ատաղձը գործ ենք դնում մեր կեանքի շինուածքի համար:

Թէ ինչպէս ենք գործ դնում, թէ արդեօք լաւ ենք շինում թէ վատ՝ չէ՞ դա մեր բանն է, պտաղձից չէ կախուած այդ, այլ մեզնից, մեր կամքի ուղղութիւնից, մեր սեփական էակութեան բարոյական.

յատկութիւնից: Մեր կամեցողութեան այս շրջանակի մէջ, բարոյական վճռահատութեանց և ինքնորոշութեանց սահմաններում՝ մենք մեզ ազատ ենք զգում: Մենք ստիպուած չենք այնպէս գործելու ինչպէս գործում ենք. մենք ամբողջովին կաշկանդուած չենք մեզ օժտած բնական պայմաններով: Մեր շուրջը սահմաններ կան քաշած՝ այդ ճշմարիտ է. բայց այդ սահմանների միջոցում մենք ազատ ենք շարժում: Միայն բնական էակներ չենք մենք, որ բնագդման կամ Հակումների բռնութեան ենթարկուած լինէինք ինչպէս կենդանիները, կամ անփոփոխելի մի ճակատագրի կարեւորութեան օրէնքին ենթարկուած՝ մենք նաև անյաշատ աշխարհի էակներ ենք. զի ստեղծուած ենք ի նմանութիւն Աստուծոյ՝ որ բացարձակ ազատ բարձրագոյն Հոգի է:

Այո՛ եթէ Աստուած չլինէր, դէպի որը մենք յարաբերութիւն ունենայինք, եթէ բնութիւնն միայն լինէր, եթէ սա Աստուած լինէր՝ այն ժամանակ մենք ևս անպայման կարեւորութեան օրէնքին ենթարկուած կլինէինք. այն ժամանակ իսպառ չէր կարող լինել ազատութեան համար. մենք ևս բուն մտքով անձնաւորեալ էակներ չէինք լինի, մեծ բնութեան մասերը կլինէինք՝ անկախութիւնից զուրկ, անազատ մասեր: Համաստուածութեան և նորանից հետեւող նիւթապաշտութեան տեսութիւնն է այս: Մենք գիտենք սակայն, որ մի Աստուած կայ, մի ազատ անձնաւորեալ Աստուած, և որ մենք միայն աշխարհի համար չենք ստեղծուած, այս կարեւորութեան աշխարհի համար, այլ Աստուծոյ՝ բոլոր բանների այդ ազատ Տիրոջ համար, և ստեղծուած ենք, որպէս զի ազատ յարաբերութիւն ունենանք դէպի Նա: Զի կոչուած ենք նորան սիրելու և նորան հնազանդելու համար: Սակայն սէրը հրամանի կամ բռնութեան չէ ենթարկուում և սիրոյ հնազանդութիւնը ազատ գործ է, որի մէջ է և բարոյականութեան բուն էութիւնը: Մեր անձնաւորեալ էակներ լինելովը մեր առաջ բաց է բարոյականութեան բարձրագոյն աշխարհը: Մենք բնագիտութեան աշխարհին միայն չենք պատկանում, մենք պատկանում ենք նաև բարոյագիտութեան աշխարհին. զի անձնաւորեալ էակներ ենք մենք, և ոչ միմիայն բնական էակներ՝ դէպի ազատութիւն կոչուած և ոչ միայն կարեւորութեան ստորագրեալ:

Այսպէս ուրիմն երկու կողմեր կրում ենք մեր մէջ, երկու աշխարհների ենք պատկանում. բնութիւն և անձնաւորութիւն, կարեւորութիւն և ազատութիւն՝ կոչուում են նոքա: Այդ երկու կողմերը ամենամօտ կապակցութիւն ունին միմեանց հետ և ամենասեր իրարով իրար մէջ են հիւսուում, կազմելով մեր էակութեան միութիւնը: Փորձով դիտենք բոլորս, ինչքան բազմատեսակ և զօրեղ են այն ներգործութիւնները, որ մեզ շրջապատող սլայմանները, այն մթնոլորտը՝ ուր շունչ ենք քաշում, այն բնական առանձնայատկութիւնը, որ ի ծնէ մեզ հետ աշխարհ ենք բերում՝ մեզ վերայ ունենում են, և ինչպէս այս ամենը շարժողութեան մէջ է դնում մեր կամքը: Սակայն չէ՞ որ ինքը վճռահատութիւնը այդ տեղից չէ. նա մերն է: Գայթակղութիւնը զօրեղ կարող է լինել, կրքերի շարժման ոյժը մեծ գործը այնուամենայնիւ մեր գործն է: Եւ նայելով թէ ինչ կողմի վերայ ենք վճիռ տալիս, ինչ ուղղութիւն է բռնում մեր կամքը՝ դորանով և որոշում է մեր բարոյական արժանիքը, մեր ներքին դիրքը առ Աստուած և մեր յաւիտենական բաղդը:

Բնութեան սահմաններում ոչ մի բարոյականութիւն չկայ, ինչպէս չկայ նաև ոչ մի անբարոյականութիւն: Զի այստեղ ազատութիւն չէ իշխում, այլ կարեւորութիւնը կամենալ կամ սլարտական լինել չէ, այլ ստիպուած լինել է: Մեծ, շատ մեծ կարող է լինել տարբերութիւնը մարդկանց ընդունակութիւնների մէջ և հետեալ բար զանազանակերպ այն նշանակութիւնն ու արժանիքը, որ իւրաքանչիւրը արտաքին կեանքի և մարդկային հասարակութեան պատմութեան համար ունի: Մի մեծ ճարտարապետ մարդկութեան շինութեան գործի մէջ բոլորովին այլ նշանակութիւն ունի քան հասարակ մշակը: Սակայն եթէ նոցա իրենց բարոյական կողմովը դատելու լինինք ոչ մէկը միւսից աւելի բարձր կամ ցածր դիրք չունի: Թէ արդեօք մէկը շատ, թէ քիչ ընդունակութեան տէր է, մեծ թէ փոքր կոչման է ծառայում՝ միևնոյն է այստեղ. բարոյական դատաստանի առաջ մի բան միայն վճռական նշանակութիւն ունի — ինչպէս է մեր ներքինը Աստուծոյ առաջ:

Սա է որ որոշում է մարդու անձնական արժանաւորութիւնը կամ անարժանութիւնը, և բոլորի համար հաւասարապէս: Զկայ

մի ուրիշ բարոյականութիւն Հանճարեղ մարդու Համար և ուրիշը սահմանափակ մարդու. զի Հոգեկան տրամադրութիւնն է այստեղ վճռողը և ոչ ընդունակութիւնը: Քրիստոնէութեան ենք պարտական մենք այս ճանաչողութիւնը: Սակայն ճշմարտութեան անմիջական զգացումն ևս վկայութիւն է տալիս իւր մասին: Երբ Տէրը Ս. Աւետարանի մէջ ասում է, թէ Աստուած մարդու սիրտն է նայում և դիտում է ծածուկը, և որ այրի կնոջ ողորմութիւնը Աստուծոյ աչքին աւելի մեծ արժանիք ունի քան մեծատունների տուրքերը, կամ թէ չէ, երբ առաքեալն ասում է, որ Աստուծոյ Համար անձերի խտրութիւն չկայ, նորա դիմացը մէկ է այր թէ կին, ծառայ թէ ազատ՝ մեր սիրտն ևս սկամայ ձայն է տալիս — այո՛, այդպէս է: Հին աշխարհի բարոյական Հայեցողութեան սխալն էր, որ մարդու մէջ աչքի առաջ ունէր ամենից աւելի ոչ թէ նորա յարաբերութիւնը առ Աստուած, այլ նորա դիրքն արտաքին աշխարհային կեանքի պայմանների մէջ և ամենից աւելի քաղաքացիական Հասարակական կեցութեան նկատմամբ: Կեանքի արտաքին պայմաններով և մեր քաղաքացիական դիրքով անհաւասար ենք բոլորս միմեանց: Բնական կեանքի այս տարբերութիւններից Հին աշխարհը բարոյական արժանեաց և ընդունակութեան տարբերութիւններ էր Հետեցնում: Նա ընդունում էր, որ մարդը աւելի ընդունակ է բարոյականութեան քան կինը, և ազատը աւելի քան ստրուկը: Ով իբրև քաղաքացի բարձր դիրք ունէր՝ Համարուում էր թէ բարոյապէս ևս աւելի բարձր է կանգնած, և Հարուստ ու անկախ լինելը Արիստոտելի աչքում էական մի պայման էր մի շարք առաքինութիւնների Համար:

Քրիստոնէութիւնը սովորեցրել է մեզ աւելի ուղիղ և աւելի բարձր ճանաչել բարոյականութեան արժանիքը, սովորեցրել է, որ բարոյականութեան աշխարհը բնականի սահմաններից և նորա Հետկապուած արտաքին խտրութիւններից բարձր է կանգնած:

Բնականի սահմաններում մենք բոլորս անհաւասար ենք միմեանց, զի բնական կեանքի Համար մեզ վիճակուած խնդիրներն ևս տարբեր են. բայց բարոյական Հայեցողութեան աշխարհում մենք Հաւասար ենք միմեանց ամենքս, զի նոյն բարոյական պարտքն ունինք.

իսկ այլ և այլ բնական ընդունակութիւնն երբ և կեանքի մէջ բռնած զիրքը նիւթ միայն պիտի մատակարարեն դորա համար:

Աւելի մօտիկից զիտենք այժմ այդ երկու կողմերը:

Այլ և այլ տարբերութիւններ կան մեզ ամենքիս իրարից որոշող՝ մեր Բնական կողմից: Եթէ մի հայեացք ձգենք մարդկային հասարակութեան վերայ՝ անհասարակութիւնների մի մեծ աստիճանացոյց կնկատենք: Նոյն այդ տարբերութիւնները և անհասարակութիւններն են կազմում մարդկութեան այն բազմազան անդամաբաշխութիւնը:

Մարդոց առաջին և նախնագոյն անհասարակութիւնը սեռական տարբերութիւնն է. մարդիկ երկրային ուրիշ կենդանի էակների նման բաժանուում են երկու սեռերի: Այս տարբերութիւնը կազմում է բոլոր միւսների հիմքը: Ամենահին տարբերութիւնն է սա. մարդկային պատմութեան սկիզբն է սա. սորանից է առաջ եկել մարդկային կեանքի մնացած բոլոր անդամութեանց բաշխումը: Եւ ոչ պատմականօրէն միայն սկզբնական է սա, այլ և իրականապէս հիմք է կազմում ողջ մարդկային ընկերական կեանքի համար, նորա բարոյական կեցութեան և բարոյական գնահատութեան համար ևս: Եթէ մենք մի որ և իցէ դարաշրջանի կամ մի ազգի բարոյական վիճակն ուզում ենք իմանալ՝ մեր հայեացքը ակամայ նաև սեռական կենցաղի վերայ ենք ուղղում միշտ և այդ ենք դարձնում չափ, որով դատում ենք ամբողջական կեանքը:

Պղատոնի «Գինարբուք» (Սիւմպոզիոն) յառաջ է բերում կատակերգու Արիստոփանի մի զուարճաբանութիւնը. Մարդ անբաժան է եղել իբր սկզբում՝ չէ եղել գեռ երկու սեռերի բաժանմունքը. բայց որովհետև Զևս տեսել է, որ նա չափից աւելի գոռոզացել և վտանգաւոր է դարձել, երկու կէս է արել նորան, այր և կին բաժանել, որպէս զի աւելի հեշտ լինի իւր գործը նորա հետ. այդ օրուանից երկու կէսերը վնասուում են իրար, զի և պատկանում են իրար: Այս զուարճաբանութիւնը մի ճշմարտութիւն է արտայայտում, նոյնը՝ ինչ որ Ս. Գրքի մէջ ևս, ուր կնոջ և մարդու յարաբերութեան մասին խօսուած է: Սոքա երկուսը միասին միայն մի ամբողջ մարդ են կազմում. իւրաքանչիւրը երկու կէսերից մարդ էակի

միայն մի միակողմանի պատկերն է: Արդ ինչու՞մն է այդ երկուսի տարբերութիւնը:

Այս հարցը ամենահետաքրքրական խնդիրներից է. զի մարդու համար չկայ ոչինչ աւելի հետաքրքիր՝ քան նոյն ինքն մարդը: Մեր ներքին անմիջական զգացման մէջ ունինք այս մի պատասխան այս հարցի համար. բայց ի՞նչպէս պէտք է մեր մտածմունքներով պարզենք մեզ խնդիրը:

Մենք գիտենք՝ մարդը ամփոփումն է բնութեան: Եւ այսպէս նորա մէջ կրկնուում են գործարանաւորական կեանքի նախորդ՝ բուսական և կենդանական, աստիճանները. մարդկային գոյութեան՝ այդ աւելի բարձր աստիճանին հասած: Պէտք է ասենք գուցէ, թէ ինո՞ք առանձնայատկութեան մէջ գերակշռող է բուսական կեանքի աստիճանը, մարդու առանձնայատկութեան մէջ կենդանական կեանքի աստիճանը:

Բոյսը հողի մէջ ունի իւր արմատը և կապուած է իւր բնավայրի հետ: Կնո՞ք կեանքը աւելի կապեալ վիճակ ունի քան մարդունը. նորա տեղը տունն է, այնտեղ են հաստատուած նորա գոյութեան արմատները և պահում են ամուր: Տունը նորա բնավայրն է և պատսպարանը: Նորա կոչումն է ընտանեկան կեանքին խնամք տանել և վարք ու բարքի վերայ հսկել, որ ամենից առաջ ընտանիքի մէջ և ընտանիքի համալ է և կապում է կեանքը որոշ կարգերի հետ:

Խզուեցան այս կապերը թէ չէ՝ կինը դադարում է կին լինելուց և փչանում է. զի չկայ ոչինչ աւելի հակասական և հակակրական քան բարքից զուրկ կինը: Մարդը ընդհակառակն իրեն ծնող և սնուցանող հողի նկատմամբ շատ աւելի անկախ դիրք ունի. կանուխ արդէն երեւում է նորա բնութեան մէջ ընդդիմադրութեան ոգին հակառակ ամեն տեսակ կաշկանդումների, և դժուարութեամբ հաշտուում է նա բարքի և կարգի հետ. ազատութիւն է նորա ձգտածը, նորա կոչումը նորան դէպի հեռուն է մղում:

Ինչպէս որ կինը խաղաղութեան մէջ անցրած հանգիստ կեանքի է պատշաճ գալիս, այնպէս և մարդուն՝ հրապարակական կեանքի անհանգիստ գործունէութիւնը, ուր յուզմունք և աղմուկ է տիրում:

Անհանգիստ և կրքոտ կինը տղեղ մի երեւոյթ է, բայց մարդու կողմից կրքի բորբոքումը շատ աւելի դիւրութեամբ ենք տանում, և մինչև իսկ երբեմն պահանջում էլ ենք:

Կանանց կոչումը չէ հրապարակական կեանքի ասպարէզի վերայ երեւի և կուսակցական կռուի ժխորի մէջ մտնել: Եթէ նոքա այդ անում են՝ ի վնաս իւրեանց կանացի կողմին են անում: Կեանքի կրուիւր վարել մեր՝ այր մարդոցս առանձնաշնորհութիւնն է. իսկ կանանց համար աւելի գեղեցիկ առանձնաշնորհութիւն է խաղաղ ջանքով այր մարդոց բացած վէրքերը բժշկել:

Ձե՛ որ նոքա էլ վշտակրութեան հերուսուհիներ են, որոյ մէջ ամենագորեղ մարդն անգամ չէ կարող նրանց հաւասարուել:

Կանանց կապուած ու միակ կեանքի հետ առնչական է այն իրողութիւնը, որ կանացի աշխարհը աւելի ներքին՝ սրտի կեանքի աշխարհ է՝ ու նորա անհատական պարագաների, մինչդեռ մտաւոր՝ այդ աւելի ընդհանուր կեանքը մեզ է սեփական: Խելքով մենք ենք աւելի գորեղը, բայց սրտի կողմը նոցա մէջ աւելի է: Մեր այս մտաւորական եղանակն աւելի խոշոր, պէտք է ասեմ նաև՝ աւելի կոպիտ գծեր է կրում իւր մէջ. կնոջ սրտի կեանքը աւելի նուրբ գործ է. զի մինչ մենք արտաքին աշխարհի իրերով ենք զբաղուում և առարկայականով ճոխացնում մեր միտքը՝ կնոջ կեանքը աւելի իւր մէջ է ամփոփուած, սրտի ներքին աշխարհի և նորա բազմազան ու փափուկ զգացմանց հետ գործ ունի: Դորա համար և կնոջ ներքինը շատ աւելի դժուար է թափանցել. դեռ երկար ժամանակ մարդու համար թաղուն կեանքի նորանոր կողմեր ու ծալքեր կբացուին այդտեղ. մինչդեռ մեր այր մարդոցս հոգին շատ աւելի հեշտութեամբ է թափանցում կինը. սկզբից արդէն աչքի առաջ շատ աւելի բաց է այդ հոգին:

Սրտի կեանքը անմիջական զգացման բնակավայրն է: Բազմակողմանի լրջամիտ յատկութիւնը խելքի գործ է, այսինքն տղամարդոց: Կանայք սովորաբար շատ առաջ չեն տրամաբանութեան մէջ: Դորա փոխանակ անմիջական զգացումն ունին նոքա նախօրէն, որ կարծես մի տեսակ բնազգմամբ գտնում է նոցա ուղեղը, որ մեզ երբեմն իբրև նախազգացման մի առանձին կարողութիւն է երևում:

Հին Գերմանացիք արդէն կանանց մէջ մի ինչ որ խորհրդաւոր բան էին նկատում: Մեր Հոգին ընդհակառակն աւելի դատողութեան Հոգի է. որ պէտք է ամեն բան ըստ իւր սկզբան և հետեանքի, պատճառի ու ներգործութեան պարզէ իրեն, եթէ նորա Հետ ծանօթանալ է ուզում. ուրիշ խօսքով՝ մենք գիտնական մտածողութեան ենք միտուած:

Եթէ կանայք այստեղ մեզ Հետ մրցել կամենան, դժուար թէ յաջողութիւն ունենան, զի իրենց բնութեան օտար մի սահման են ուսկոխում: Դորա փոխանակ նոքա ունեն արագ ըմբռնման, անմիջական ընտրողութեան մի ընդունակութիւն, որով յաճախ մեզ ամօթով են թողնում: Մինչ մենք մեր ներքին մտածութեանց աշխատանքի մէջ քայլ առ քայլ առաջ գնալով դեռ ճանապարհի կէս տեղըն ենք, նոքա վաղուց արդէն Հասել են նպատակին: Դուք անշուշտ արդէն նկատել էք բոլորդ թէ կանանց Հոգին ինչքան աւելի արագ ու շարժուն է, մինչ մերը այնպէս դանդաղ ու ծանր: Արդարեւ երբ մենք Հասնում ենք նպատակին, աւելի հարուստ ենք, ճանապարհին շատ աւելի պաշար ենք վերցրել հետեւեւ. սակայն շատ հեշտութեամբ է պատահում, որ մենք մոլորուում ենք ճանապարհին և նպատակը կորցնում աչքից: Յաճախ անթիւ ծառերի մէջ մենք անտառը չենք տեսնում:

Հէնց այստեղից է առաջ գալիս, որ մենք այր մարդիկս աշխարհն և իւր ընդհանուր կապակցութիւնը դիտելիս այնպէս հեշտութեամբ միջնորդական պատճառների վերայ կանգ առնում մնում ենք և չենք Հասնում բոլոր իրերի վերջին բարձրագոյն պատճառին՝ Աստծուն. մինչդեռ կանանց Համար բնական է մտքի մէջ իսկոյն դէպի այդ Վերջինը, այդ Բարձրագոյնը շտապել, առանց երկար դադար առնելու միջնորդական պատճառների վերայ: Իրերը կրօնական Հայեցակէտից դիտել բնական է կնոջ, մինչդեռ մենք յաճախ գիտութեան Համար կորցնում ենք կրօնը, որովհետեւ միջնորդական պատճառների մէջ մոռանում ենք վերջին պատճառը և աշխարհքի մէջ միլորուած այլ ևս Աստծուն չենք գտնում: Սակայն մինչ այս մարդու Համար եթէ ոչ արդարացնել, գոնէ ներել տրամադիր ենք մենք, որովհետեւ բացատրել կարող ենք մեզ, կնոջ Համար անկրօն

լինելը կրկին ու կրկին անբնական է, անկրօն կինը փչացած մարդ է և կրկնակի կորստաբեր այն մարդոց համար, որոնց վերայ նա ազդեցութիւն է ձեռք բերում:

Այսպէս երկու սեռերի մէջ ևս ներկայանում է մեկ նոյն մարդկային բնութիւնը, բայց իւրաքանչիւրի մէջ առանձնայատուկ և միակողմանի: Միայն մարմնական տարբերութիւն չէ, այլ մտքի ու սրտի ողջ կազմութեան եղանակի տարբերութիւն, որ երկուսին բաժանում է իրարից, բայց և հէնց դորա համար մէկի հակումը դէպի միւսն ուղղում, որպէս զի մէկը միւսին իբրև ամբողջացումն—լրումն ծառայէ: Մի անսահման հրապոյր ունի այր մարդու համար կանացի բնութեան խորերն ընկզմեն, ինչպէս և ընդհակառակն կնոջ համար՝ մարդուն նուիրելն իրեն, որովհետև իւրաքանչիւրի համար միւսի մէջ մի բոլորովին նոր աշխարհ է բացուում: Բոլորովին տարբեր մի եղանակ կայ այստեղ առարկաները դիտելու և ըմբռնելու, որ իւրաքանչիւրին իրեն յատուկ է և միւսի համար միշտ նոր կմնայ, կըշարժէ ու կկաշկանդէ միւսի հետաքրքրութիւնը:

Այս կրկնակի՝ այր մարդուն յատուկ և կնոջ յատուկ, եղանակներով պէտք է մարդ իւր աշխարհային կոչումը լցուցանէ: Բայց մեր աշխարհային կեանքը Աստուծոյ հետ ունեցած կեանքի համար պիտի ծառայէ. և մեր բնական կերպն ու ընդունակութիւնը միայն միջոց պէտք է լինի այս բարձրագոյն բարոյական կոչման համար: Այսպէս ուրեմն այր և կին կոչուած են իրենց տարբեր յատկութիւններով, որոնք փոխադարձ պահանջ են մէկը միւսի համար, այս բարձրագոյն նպատակին իրար ծառայելու և օգնական լինելու իրար այս լաւագունի ու յաւիտենականի համար: Սակայն եթէ իրականութիւնը դիտենք, ստիպուած կլինինք ասելու, որ նոքա աւելի շատ իրար մոլորեցնելու և մեղքի մէջ ձգելու են նպաստում, քան թէ հոգւոյ պաշտպանութեան:

Մենք գիտենք, որ հին աշխարհի համար ոչինչ այնքան մեծ պատճառ չէ եղել կորստեան, որքան երկու սեռերի յարաբերութեան մէջ ընկած ապականութիւնը: Կանայք հրապուրել են այր մարդոց և մարդիկ ի չարն են գործ դրել նոցա, և այն ինչ որ ամենաքնքեղն ու աղնուազոյնը պիտի լինէր դարձել է ամենագոռհիկը և ամենաա-

պականարարը: Աւետարանն էր որ ինչպէս երկուսի հաւասարութիւնը Աստուծոյ առաջ ճանաչել տուաւ, այնպէս և երկուսին աշխարհի մէջ ցոյց տուած տարբեր դերը որոշել սովորեցրեց:

Այսօր նոյն իսկ, ինչպէս դուք բոլորդ գիտէք, մարդկային հասարակութեանը ոչ մի կողմից այնքան մեծ վտանգ չէ սպառնում, որքան այս կողմից: Այսօր ևս չկայ մի այլ զօրութիւն, որ բնութեան արժանաւորութիւնը պաշտպանէ, բայց եթէ աւետարանը:

Հետեւեալ տարբերութիւնը մարդկային բնութեան մէջ այն է, որ իսկական անունով որոշում ենք: Երկար ժամանակ խառնուածքների ողջ հարցը իբրև անպէտք ու չնչին էին յայտարարում, որովհետև զուր աշխատանք էին համարում այսպիսի տարբերութիւններ դնելը:

Սակայն նոր ժամանակումս կրկին նշանակութիւն ստացաւ նա և նորոգ հետազօտութիւնների առարկայ դարձաւ: Պէտք է չորս խառնուածքների անունը՝ ինչպէս սովորական է հաշուել—արիւնաւորին, մելամաղձային, մաղձային և մաղասային (սանգուլինիկ, մելանխոլիկ, խոլերիկ և ֆլէգմատիկ): Այս անունները ծաղում են մեր մարմնի մէջ եղած նիւթերը ցոյց տուող համանիշ բաւերից: Կարծում էին թէ մէկ կամ միւս նիւթի գերակշռութիւնով կարելի է բացատրել խառնուածքների տարբերութիւնը:

Այս հիմունքը հարկաւ խախտու է, սակայն այն ճշմարտութիւնը կայ այստեղ, որ խառնուածքը հոգեկան մի վիճակի արտայայտութիւն լինելով հանդերձ՝ մարմնական կազմութեան յատկութիւնների հետ կապակցութիւն ունի: Զի շատ աւելի սերտ կերպով է հիւսուած մարմնականի հետ, քան մենք սովորաբար աչքի առաջ ունինք: Այսպէս ուրեմն թէպէտ հոգեկան կեանքի մի վիճակ է խառնուածքը, բայց պայմանաւորուած է մարմնականով. կարելի է անուանել նորան—հոգեկան կերպ բնութեան:

Այս վիճակը կապ ունի դէպի մեր արտաքին շրջապատն ունեցած յարաբերութեան հետ: Դորա համապատասխան և բաժանուում են խառնուածքները. զի մեր յարաբերութիւնը առարաքին աշխարհը չորս կերպ կարող է լինել:

Առաջին, երբ մենք արտաքին աշխարհի շփումից հեռանում ենք

և քաշուում ենք մեր ներքալ: Այստեղ մենք մեր աշխարհն ունինք, որ մեզ համար երեակայութեան երանգներով զարդարում ենք: Հարկաւ քիչ է պատահում, որ տարաքին աշխարհը նորան համապատասխան լինի, և այդ պատճառով երբ մենք կրկին ընդհարումն ենք ունենում վերջինիս հետ՝ խորթ է գալիս նա մեզ և հեշտութեամբ զրգուում, բորբոքում:

Այսպիսի մարդը, որ սովորաբար խաղաղ է եղել միշտ և ինքն իւր մէջ քաշուած՝ ամենասաստիկ կերպով յուզուիլ կարող է այդ ժամանակ, լինի այդ ցաւ, երկիւղ թէ թախիծ. և թէ նաև բուռն ուրախութիւն: Պարզ է, կարծեմ, որ մերամաշէնքի մասին է խօսքս, կամ թէ, ինչպէս նաև թիւր հասկացողութիւններից խոյս տալու համար անուանել են՝ զգայական (սենսիվնետալ) խառնուածք:

Եթէ նոր Կտակարանից ծանօթ անուններ առաջ բերել պէտք է, կարող եմ Ս. Թոմաս առաքելոյ անունը տալ, որ մերթ մոռայլութեան խաւարի մէջ էր ընկղմած, մերթ պահնչացած սլանում վրանում էր յաղթանակող հաւատոյ բարձունքները:

Յիշեմ և Ս. Յովհաննէս առաքեալին, այդ լուիկ, խորին բնաւորութիւնն, որի մէջ սակայն մի կրակ էր բորբոքում և երբեմն նաև եռանդուն արտայայտութիւններով զուրս էր ցոլում:

Հոգւոյ երկրորդ բնական կերպը այն է, որ թէպէտ մեզ աշխարհի հետ մի տեսակ յարաբերութեան մէջ դնում ենք, բայց դա աւելի խաղաղ դիտողութեան վիճակ է միայն:

Մենք իրերը չենք փնտռում, այլ թողնում ենք, որ իրենք մեզ մօտ գան. մենք թոյլ ենք տալիս շատ բան, որովհետև սպասել կարող ենք. մնում ենք անվրդով և չափ պահում՝ չկորցնելով հեշտութեամբ լուրջ խոհականութեան իշխանութիւնը:

Այսպիսին վերջ ի վերջոյ իւր նպատակին կհասնէ և կհնձէ գուցէ այնտեղ, ուր ուրիշները սերմանել են: Մաղաստներինն է, ասում են, աշխարհը: Նոր Կտակարանից վերցրած պատկերների մէջ ես Նիկողիմոսին մաղասային կանուանեմ, որ դանդաղ, բայց ապահով ճանապարհով քայլ առ քայլ առաջ էր գնում իւր ներքին կերպաւորութեան մէջ. իսկ Փրկիչ Յիսուսի մեռնելուց յետոյ՝ նորա մարմինը թաղող հաւատարիմներից մէկն էր:

Երրորդ բնական կերպն է, որ մենք թէպէտ աշխարհի հետ մի կենդանի յարաբերութեան մէջ ենք դնում մեզ, բայց այնպէս, որ թոյլ ենք տալիս նորան մեզ վերայ ներգոծել և մեզ կենդանի շարժման մէջ դնել: Մեզ համար մի կարիք է այլևս նորա հետ այս մշտական փոխադարձ հաղորդակցութեան մէջ լինելը. այնտեղ է մեր կեանքը, ինչ որ բերում է մեզ ներկայ վայրկեանը, նորան և անձնատուր ենք մենք. և ինչ որ պահանջում է, նորանից չենք հրաժարուում: Այս վայրկեանի մարդոց արիւնսայլին ենք անուանում: Այս տեսակին պատկանում է առաքեալների մէջ ամենից առաջ Ս. Պետրոսը. ոչ ոք նորա չափ վայրկեանի տպաւորութեան ներքոյ չէր, նորա պէս սրտոտ և միանգամայն երկչոտ՝ զգացմանց արագ փոխանորդութեան համեմատ, և ընդունակ յարմար տեղին յարմար խօսքը բերել, որի համար և առաքելոց բերանը:

Եւ վերջապէս չորրորդ եղանակն այն է, որ մենք կենդանի և գործունեայ յարաբերութեան մէջ ենք աշխարհի հետ. ոչ այնպէս, որ նա մեզ սահմաններ տայ, այլ առաւել, որ նա մեզինց սահման և կերպարան ընդունէ. մենք նորա վերայ մեր կամքի ուժով մեր անձնական դրոշմը կնքենք: Մաղձայիններն են սոքա՝ կամքի և գործի մարդիկ, պատմութեան մարդիկ: Առաքեալների շրջանից ամենից աւելի Ս. Պողոսի վերայ կգնայ ձեր միտքը, այդ եռանդուն խելքի և վճռական գործի տէր մարդու:

Մի ժամանակ կար, երբ մեղամաղձային խառնուածքը, իբրև բանաստեղծների և փիլիսոփաների խառնուածք (այսպէս էր արդէն Արիստոտելի կարծիքը)՝ մեծ յարգի էր. իսկ մաղասայինը ընդհակառակն՝ իբրև Բէռնիկան գեղջուկ խառնուածք (ինչպէս անուանում էին ռոմանտիկները) արհամարհուած էր: Սակայն Կանտ փիլիսոփան՝ մաղասային բնութիւն էր, իսկ թէ Գէթեին մեղամաղձոտ էր արդեօք կասկածելու է: Մենք իբրաւունք չունինք մի խառնուածք միւսից աւելի բարձր դնել. իւրաքանչիւրը իւր առաւելութիւններն ունի, իւրաքանչիւրը ունի իւր պակասութիւններն ու վտանգները: Նոցա մէջ եղած տարբերութիւնները բարոյական բնաւորութիւն չունին, այլ բնական: Մի ինչ որ խառնուածային առաքինութիւնների մասին խօսում են, այո՛, բայց սոքա իրական առաքինութիւններ չեն, այլ

պէտք է նախ դառնան իրական: Թէև արիւնային բնաւորութեան առատաձեռնութեան առաքինութիւնը վերագրում են, իսկ մաղաստին ժլատութեան մոլութիւնը, բայց ոչ առաջինը, ոչ երկրորդը իրենց բնութեամբ ինքն ըստ ինքեան բարոյական չեն կամ անբարոյական, այլ լինում են այսպէս կամ այնպէս նայած թէ ինչ դիրք է բռնում այստեղ կամքը: Ամենից աւելի սակաւ կարելի էր ասել օրինակ, թէ այս ինչ խառնուածքին աւելի մօտ է Աստուծոյ արքայութիւնը քան միւսին: Այն չորս տեսակ սերմն ընկած տեղերը, որ առակը առաջ է բերում, խառնուածների պատկերը չկարծէք: Ընդհակառակն ի բնէ մէկը նոյնչափ մօտ կամ հօռի է Աստուծոյ արքայութիւնից, որչափ և միւսը, իւրաքանչիւրը ուղղութիւն պէտք ունի. զի փորձանքի ենթակայ է իւրաքանչիւրն և կարող է մեղքի ձեռքում փչանալ: Իւրաքանչիւրը միակողմանի է և ամբողջացման պէտք ունի: Մեր բնութիւնն էլ հէնց նորա համար այսպէս այլ և այլ կերպերով է յօրինուած, որպէս զի բոլորի միացումից մարդկային հասարակութեան ընդհանուր ներդաշնակութիւնը յառաջ գայ: Վաղ ժամանակից արդէն կեանքի զանազան հասակները համեմատել են խառնուածքների հետ. և արդարեւ ուրանալ նմանութիւնը չէ կարելի: Մանկութիւնը արիւնային խառնուածքի աստիճանն է. մանուկը վայրկեանի համար է ապրում և նորա մէջ արագ յաջորդում են իրար ուրախութիւնն ու վիշտը, ներկայ վայրկեանով ամբողջովին գրաւուած լինելը՝ այդ սիրելի կողմն է մանկան մէջ: Արիւնային բնաւորութիւնը միշտ մի ինչ որ մանկական բան ունի. այս դարձնում է նորան ուրիշներից աւելի հաճոյական: Բայց այն էլ ճշմարիտ է, որ դորա հետ մէկ տեղ, ինչպէս և երեխայի համար, կեքծես ձեռք ձեռքի տուած գնում է անձնակամ, դժկամակ, յեղկեղուկ լինենու վտանգը: — Եթէ ես այժմ պատանին մեղամաղձոտ անուանեմ, գուցէ կհարցնէք զարմացած՝ չէ՞ միթէ որ պատանեկութիւնը ուրախութեան ժամանակն է: Այո՛, բայց ամենից աւելի գաղափարական կեանքի (Իդէալների) ժամանակ. և ահա հէնց այդ է պատանուն մեղամաղձոտ դարձնում: Նա կերտում է հոգւոյ մէջ իւր սեփական աշխարհը՝ գաղափարական աշխարհ, որի համար և զառանցում է նա բոլրեք զգացմամբ, սրտի մէջ իրեն շատ բարձր

երևակայելով այս առօրեայ իրականութեան աշխարհից: Այս պատանեկական բնութիւնն իւր մի առանձին գեղեցկութիւնն ունի. և այդ մտքով մենք պէտք է միշտ երիտասարդ մնանք, լաւ է ասած՝ ով ծերանում է, երբէք երիտասարդ չէ եղել: Պատանեկութեան վտանգաւոր կողմն է ամենքին արհամարհող ամբարտաւանութիւնը և ցնորքներն ու զգածումների մէջ ծփումն: Որ խոյս է տալիս լուրջ աշխատութիւնից և վայելքի մէջ է գաղափար փնտռում. վերջ ի վերջոյ այնպիսի վայելքի՝ որ շատ սակաւ թէ գաղափարական է. — Այրական հասակը աշխատանքի ժամանակ է, այս ժամանակամիջոցում ձգտում ենք մենք աշխարհի վերայ մեր կնիքը դրոշմել: Մեր կամքը մաքառում է իրական կեանքի ընդդիմադրող տարրի դէմ, իշխել է ուզում նորա վերայ: Մաղձոտի տեղն է այս: Պօզոս առաքեալը իբրև մաղձային բնութիւն կարող էր այս ասել իւր համար, թէ միւս բոլորից աւելի է գործել: Մենք բոլորս կոչուած ենք աշխատելու: Իսկ մաղձային բնութեան վտանգը իշխանասիրութիւնն է: — Գործի ժամանակին հետեւում է ծերութեան հասակում հանգստութեան ժամանակը: Փոթորիկները խաղաղում են և տեղ են բաց անում լուրջ կշռադատութեան համար. կռուի ախորժակը տեղի է տալիս համբերողութեան, որ սպասել գիտէ: Ինքն Աստուած Արքի մէջ հինաւուրց է կոչուած և նորա կառավարութեան մէջ մենից աւելի հիացման արժանին այն համբերութիւնն է, որով նա սպասել կարող է: Իայց մաղասային բնաւորութեան միւս երեսը անտարբերութիւն և դաժանութիւն է:

Բնութեան ողջ աշխարհը Աստուծոյ յախտնական գաղափարների մի նկարագիր է: Խառնուածային առանձնայատկութիւնները առաքինութիւններ չեն. բայց բնական տիպեր են առաքինութիւնների և մենք պարտաւոր ենք նոցա բարձրացնելով ու լուսաւորելով իսկական առաքինութիւններ դարձնել: Մենք պէտք է միշտ մանուկներ լինենք՝ վառ և միանգամայն անպաճոյճ ատակութիւն անուցանելով Աստուծոյ արքայութեան բարեքներին համար:

Մենք պէտք է միշտ երիտասարդ մնանք՝ սիրելով ամեն բարին ու գեղեցիկը: Մենք պէտք է տղամարդիկ լինենք՝ Քրիստոսի զինուորներ, հպտուն և զօրաւոր կռուի մէջ: Եւ մենք պէտք է պահպանենք

Հոգւոյ խաղաղութիւնը, որ զարդն է ծերութեան և օրինակ յաւիտենական Հանգստութեան, որին մնում ենք յուսով:

Սակայն մասնաւոր մարդիկ չեն միայն զանազան անհատականութիւններ կազմում. ազգերն էլ մեծամեծ անհատներ են: Իւրաքանչիւր ազգութիւն իւր Հոգւոյ մի ընդհանուր կնիք ևս ունի, ինչպէս որ սկզբնական ունակութիւն, պատմութիւն, կլիմայ, զբաղմունք յառաջ են բերել: Այս ընդհանուր ազգային տիպարին մասնակից է և մասնաւորը. իւր ազգի տիպարը անդրադառնում է նորա մէջ և Հոգւոյ ազգակցութեան գիծը կապակցում է նորան ամբողջութեան հետ և հրաւիրում է իւր ազգին ու Հայրենիքին նուիրել իրեն և զոհաբերութիւններ անել: Տարբեր տիպարի և ընդունակութեան համեմատ որոշուում է առանձին ազգերի աշխարհի մէջ ունեցած տարբեր պատմական կոչումը: Մի ազգի կոչումը կարող է աւելի ծանրակշիռ լինել, միւսինը աւելի աննշան. կան առաջաւոր ազգեր, իկան պակաս առաջաւորները. սակայն բարոյապէս առած ոչ մի ազգ իւր բնական առաւելութեան համար միւսից բարձր չէ. ոչ մէկը իրաւունք չունի արհամարհանքով բարձրից նայել միւսի վերայ. ազգային ատելութիւնը ազգերի իսկական մեղքն է: Բարձր թէ աննշան ընդունակութեանց տէր լինի մի ազգ՝ բոլորը հաւասարապէս կոչուած են մարդկութեան Բարձրագոյն բարոյական պարտքը լցուցանելու, որի ծառայութեան մէջ պէտք է դնեն նոքա իրենց բնական առանձնայատկութիւնը: Իւրաքանչիւրը նշանակուած և ի բնէ օժտուած է իւր քաղաքակրթական կոչումը, երկրի վերայ բարոյական ոգւով ի կատար Հանելու և այդպէս իւր բաժին քարերը բերելու Աստուծոյ արքայութեան շէնքի համար: Այս է սահմանուած ազգերի համար և այս պիտի լինի նոցա փառասիրական ձգտման նպատակն և նոցա մրցութեան գինը:

Մարդկային բնութիւնը այլևայլ կերպերով է բաժանուած իրեն կրող մասնաւոր անհատներին մէջ՝ կերպաւորելով այսպէս մարդկութեան ճոխ կազմածը: Իւրաքանչիւր առանձնայատկութեան համար պարտաւորիչ է ինքնապահպանութիւն. զի նա իւր առանձին տեղն ունի մարդկութեան համաշխարհային կոչման մէջ. բայց պարտաւորիչ է նաև, որ նա միւսներին հետ միանայ, զի միացմամբ միայն մասնա-

ւորները կազմում են մարդկութեան մի կազմածի. համերաշխ ամբողջութիւնն և լցուցանում նորա ընդհանրական կոչումը: Մասնաւորների և ազգութեանց բնական ընդունակութիւնը զանազան է իւր արժանիքովն ու նշանակութեամբը, սակայն անձնաւորութիւնը նոյն և նման է բոլորի մէջ: Զի աշխարհը զանազանակերպութիւն է. բայց Աստուած մի է: Մեր յարաբերութիւնը դէպի աշխարհը և կատարելիքը աշխարհում զանազան է, բայց Աստուծոյ դիմաց բոլորս էլ հաւասար ենք միմեանց: Նախնի ազգերի հայեցողութեան պակասութիւնն էր մարդուն միայն իւր աշխարհի հետ ունեցած յարաբերութեամբը ըմբռնել, նորան իբրև մի Բարձրագոյն բնական էակ միայն նկատել: Սորա հետևանքն այն էր, որ զանազանութիւնները նոցա աչքին երևում էին, բայց բոլոր մարդոց հաւասարութեան վերայ ոչ մի հասկացողութիւն չունէին: Թէ այրը կնոջից, ազատ քաղաքացին ստրուկից, Յոյնը բարբարոսից բարձր է կանգնած, վճռուած բան էր այդ: Յոյները համարում էին, թէ ազատ քաղաքացին և կրթուած Հելլէնը միայն իրականացնում է իւր մէջ մարդու էակութիւնը:

Որ թէ մարդը մարդուն հաւասար է՝ ազնիւ թէ ստոր ցեղից լինի նա, ազատ թէ անազատ, կրթուած թէ անկիրթ՝ նոցա իմաստունների համար գաղտնի մնաց այդ:

Մասնաւոր մշակութիւնը ճշմարտութեան գտնում ենք այժմ, բայց ցրուած են դոքա և առանց բուն նշանակութեանը գիտակից լինելու արտայայտած: Քրիստոնէութիւնը եղաւ առաջինն, որ այն գիտակցութիւնը, թէ բոլոր մարդիկ միմեանց հաւասար են՝ ազգերի ընդհանուր սեփականութիւն և մարդկային հասարակութեան նոր շինուածքի հիմնաքարը դարձրեց: Զի առաջին անգամ քրիստոնէութիւնը ըմբռնեց մարդուն՝ ոչ ըստ իւր աշխարհի հետ ունեցած յարաբերութեան միայն և իբրև բնական էակ, այլ ըստ իւր առ Աստուած յարաբերութեան և իբրև բարոյապէս ազատ անձնաւորութիւն:

Աստուծոյ դիմաց բոլորս հաւասար ենք:

Ուրիշ ամեն նկատմամբ մենք բոլորս զանազան ենք, բայց այստեղ չկայ այր ու կին, հրէայ և յոյն, այլ բոլորը մի՛ ի Քրիստոս:

Ինչու՞մ է անձնաւորութեան էութիւնը, որով մենք բնութեան սահմաններէց վեր ենք բարձրանում: Բոլորդ էլ կասէք՝ ազատ կամքի մէջ. զի ինչքան և մեր բնութիւնը մեզ կաշկանդում է, ազատ ենք սակայն այդ կապանքների մէջ. Կեանքի Հոսանքի Հետ մենք առաջ ենք գնում, ինչպէս բնութիւնը և բաղդը առաջնորդում են. այն սահմաններից դուրս ելնել մենք չենք կարող, ուր արգելած պահում է մեզ մեր կեանքի նաւը, բայց ազատ շարժել այդ նաւի վերայ կարող ենք: Այլ և այլ տեսակ ներգործութիւնների և տպաւորութիւնների ենթակայ ենք մենք, բայց վճիռ տալու ազատութիւնն ունինք: Մենք բազմակերպ կապակցութիւնների մէջ ենք գտնուում, բայց նախաձեռնութեան կարողութիւնն ունինք, կարող ենք Հնի կապակցութեան մէջ մի նոր բան սկսել: Մեր գործողութիւնները տեղի են ունենում արտաքին կամ ներքին շարժառիթներից, բայց ամեն գործի մէջ մենք գիտակցութիւն ունինք, որ այլապէս ևս գործել կարող էինք: Այս ուրիշ բան ևս անել կարողանալու իշխանութիւնը, այս նախաձեռնութեան զօրութիւնը, այս ինքնորոշութեան ոյժը՝ այս է ազատութիւնը: Սակայն դուք կասէք. այս դեռ ճշմարիտ, կատարեալ ազատութիւն չէ՝ այս կարողութիւնը, որ մենք կամենալ կարող ենք: Կամենալ կարողանալը բարձրագոյնը չէ դեռ, ուղիղ կամենալ՝ այդ աւելի լաւ է: Կամեցողութեան ոյժը՝ յիշաւի առաջինն է դա. սակայն կամքի բովանդակութիւնն է գլխաւորը: Ճշմարիտ ազատութիւն մեր կամքը միայն այն ժամանակ ունի, երբ նորա Համապատասխան ճշմարիտ բովանդակութիւն ունի: Ո՞րն է այդ: Մի աստուածային գաղափար է մեր էութեան Հիմքը, զա է մեր իսկական ճշմարտութիւնը: Երբ նա կազմում է մեր իրականութիւնը, երբ նորանից է սկիզբն առնում մեր գործողութիւնը, երբ մենք այս ճշմարիտ էակութիւնը՝ ինչպէս Համաձայն է այդ Աստուծոյ կամքին, մեր գործառնութեան բովանդակութիւնն ենք դարձնում, այն ժամանակ միայն ճշմարտապէս ազատ ենք մենք: Աստուծոյ կամքի Հետ Համերաշխութիւն՝ այս է կամքի ճշմարիտ ազատութիւնը: Աստուծոյ կամքին Հակընդդէմ գնալը անազատ է անում մեզ, և «ով մեղք է գործում» մեղքի ստորակ է:

Այս է ահա մարդու բարոյական իրականութիւնը:

կայ այն մի բնական բարոյականութիւն. ես շատ հեռու եմ այդ
 արանալուց: Գիտեմ, որ կայ բնական առաքինութիւնների մի
 շարք, որ քրիստոնեայ չլինելով հանդերձ կարող է մարդս իւր ընտա-
 նիքի, տէրութեան, հասարակաց բարիքի, մարդկութեան բարւոյն
 համար ապրել և զոհաբերութիւն անել: Եւ ուր մենք այդ գրա-
 նում ենք՝ հոգուանք է պատճառում մեր սրտին այդ ազնիւ տրա-
 մադրութիւնը: Եւ սակայն՝ այս դեռ ճշմարիտ բարոյականութիւնը
 չէ: Այն բոլոր բաղձները, որոց այդպիսի մէկը նուիրում է իւր
 կեանքը՝ ճշմարիտ, բարձրագոյն բարին չեն, անցաւոր, ստորա-
 դրեալ բարիք են: Ով որ բացառապէս նոցա համար է ապրում՝ նոցա
 բարձրագոյն բարիք է. Դ. սրձնում, Աստուած է դարձնում. դա
 մոլորութիւն է, անարդարութիւն է, անկան կէտն այստեղ այն է, թէ
 արդեօք մեր կեանքը այս ակունքի է հոսում, թէ արդեօք մեր հո-
 գին բոլոր էութեանց այս միջնակէտի վերայ է հաստատուած, թէ
 մնում է շրջագծի վերայ կանգնած: Զոհաբերութեան մեծութիւնը
 չէ որոշում կեանքի բարոյական արժանիքը, այլ սրտի ներքին հիմ-
 նական ուղղութիւնը, նորա ներքին շաղկապի լուծումը և վերջնական
 նպատակը: Զի Աստուած տեսնում է ծածուկները:

Մի ազնիւ և շատ առաքինութիւններով զարդարուած պատանի էր
 որ Տիրոջ յաւիտենական կեանքի մասին հարցրեց: Իսկ Տէրը, խոսելով
 է Ս. Գիւրգէս, նայեց նորան և տխրեցաւ. բայց երբ պահանջեց, որ նա
 վճռական քայլն անէ՝ բոլոր իւր ունեցածը բաժանէ և միակը,
 թանկագին մարգարիտը գնէ՝ չկարողացաւ նա այդ որոշումն անել:
 Նա հեռացաւ՝ տանելով պատերազմ իւր սրտի մէջ: Այս ներքին
 երկպառակութիւնից բնական մարդուն բարոյական ազնուութիւնն
 ազատել չէ կարողանում: Մեզ բոլորիս ծանօթ է մեր ներսն եղած
 այս երկպառակութիւնը: Մենք բոլորս Աստուծոյ յաւատենական
 կամեցողութիւնը կրում ենք մեր մէջ, որ մեր էութեան օրէնքն է
 կազմում. այն է թէ մենք Աստուծոյ մէջ միայն և նորա հետ ունե-
 ցած հաղորդութեամբ պէտք է գտնենք մեր կեանքի նպատակը. քայքայ
 մեր իրականութիւնը հակասում է այս օրէնքին, և ոչ միայն հակա-
 սում, այլ և հակառակը ձգտում: Զի Հէնց այդ է մեր գոյութեան

այն տխրալի տարօրինակութիւնը, որ մենք մեր մէջ կրում ենք Հակումն դէպի Աստուած, և սակայն Հակառակն ենք ձգտում դորան, որ ազատութիւն ենք փախադում, և սակայն սիրում ենք մեղքի շղթաները, որ բարւոյ և ճշմարտի մի բարձրագոյն նախագաղափար (իդէալ) կանգնած է մեր Հոգու առջև, և սակայն նորան ընդդէմ ենք գինուում, որ տենչանաց թւեր ունինք, և սակայն փոշին ու տիղմն ենք սիրում:

Մի ագնիւ ստրուկ կայ քո մէջ, որին ազատութիւն տալ պարտական ես: Դիտէք բոլորդ Պօղոս առաքեալի արձակած այն ցնցիչ բողոքները. «Մարմնեղէն եմ ես, մեղքի ձեռքը գերի, զի այն չեմ անում ինչ որ կամենում եմ այլ անում եմ այն, ինչ որ ատում եմ»:

Դիտեմ որ իմ մէջ, այն է իմ մարմնի մէջ, բարի ոչինչ չկայ: Եւ մի ունիմ արդարեւ, բայց բարին կատարելու միջոց չունիմ. զի բարին, որ ցանկանում եմ, չեմ անում, այլ չարը, որ չեմ ցանկանում՝ այն եմ անում: Աստուծոյ օրէնքը Հաճելի է ինձ ըստ ներքին մարդոյն, բայց իմ անդամների մէջ մի ուրիշ օրէնք եմ տեսնում, որ իմ Հոգւոյ մէջ եղած օրէնքի Հակառակն է ձգտում և բնատարկած պահում է ինձ մեղքի օրէնքի ներքոյ, որ իմ անդամների մէջ է: Եւ թշուառականս. ո՞վ պէտք է փրկէ ինձ այս մահացու մամնից: Եթէ արդէն Պօղոս առաքեալն այսպէս պէտք է խօսէր ի փոճոյ՝ մինչ Աստուծոյ գործը նորա Հոգւոյ մէջ արդէն սկիզբն էր առել ինչքան աւելի այս վիճակը մեզ է վերաբերում, բնական մարդու է վերաբերում, որի Հոգւոյ ներսը մի խորը բարոյական պառակում ճեղքում բաժանում է: Ի՞նչը պէտք է մեզ ազատ կացուցնէ, ճշմարտապէս ապատ:

Խճը այդ չէ անում, և ոչ նոյնպէս օրէնքը, այլ միայն աւետարանը. Բրիստոսի Հոգին, ներքին նորոգութեան Հոգին:

Ի՞նչը վերջինն է սա, որ մարդուն մնում է եւ այն ժամանակ, երբ բոլր միւս Աստուծոյ տուածները նա դէն է ձգել, կորցրել է:

Վերին կապն է այս այն կապակցութեան, որի մէջ պահում է Աստուծ իրենից շեղուած մարդուն և որի միջոցով յիշեցնում է նոյն նախ իւր Հայրենի տունը, որ նա թողել է: Հեթանոսութեան ամենակեալ ժամանակներում ևս սա մի ոյժ էր դեռ. և Հէնց

ուղիղ ամենախորը անկման ժամանակներից յիշատակուում են չար խղճի և նորա գաղտնի խայթերի համար ամենաազդ ու վկայութիւններ: Թէպէտ խիղճը ևս անարատ չէ մնացել ընդհանուր մեղսական եղծումից, որ մեր ամբողջ էութիւնը բռնել է, նորա ճշգրտութիւնը և ոյժը թուլացել է: Հեթանոս ազգերը՝ դիտելով՝ տեսնում ենք ամենուրեք, թէ ինչպէս խղճահարուում են մարդիկ այնպիսի բաներից, ուր խղճահարուելու ոչինչ չկայ և ընդդէմ չեն համարում խղճի այնպիսի բաներ, որ ընդդէմ են իսկապէս: Խիղճը մոլորութեան մէջ է, ինքն իրեն ուղիղ չէ ճանաչում: Եւ ի՞նչպէս յաճախ մեղքի ոյժը խղճի ներգործութեան դէմը բռնում է և թուլացնում նորան, այնպէս որ նորան այլևս չեն հարցնում: Սակայն ինչքան էլ եղծուի ու յեղաշրջուի խիղճը՝ նորա գոյութիւնը դորանով չէ բարձուում: Ի ընդհանուր իրողութիւն է սա, որ բոլոր ազգերի մէջ իւր ոյժը ցոյց է տալիս, և մի անհերքելի իրողութիւն՝ մի ներքին մեծութիւն, որ առաջ պէտք է բոլոր մարդիկ խոնարհին. և Հէնց նոյն իսկ նոյա Հեղինակութեան տակից դուրս գալու ձգտած ժամանակ ճանաչում են նոքա նորա ոյժը: Եւ դա մարդկային սովորութեան վերայ հիմնուած մի օրէնքի Հեղինակութիւն չէ միայն, որ խիղճը մարդու առջն է դնում, այլ նա ցոյց է տալիս իրեն իբրեւ աստուածոյին կամքի արտայայտութիւն, որի դէմ ոչ մի հակաճառութիւն բնի տեղ չէ անցնում:

Ձիւթէ և չափազանցութիւն է խիղճը նոյն իսկ Աստուծոյ այն անուանել, բայց և այնպէս մեր հոգւոյ մէջ նա մի վկայութիւն է տալիս գոնէ Աստուծոյ կամեցողութեան մասին, որ մենք կրու ենք մեր մէջ իբրեւ մեր էութեան օրէնք, և կոչում է մեր կամեցողութիւնն ու գործողութիւնն իւր դատաւորական գահի առաջ. իպէս զի այստեղ բարոյական օրէնք և բարոյապէս վճռահատութիւն ընդունեն: Ձի ինչպէս Աստուած աշխարհի օրէնստուն և դատարն է՝ խղճի գործունէութիւնն ևս կրկնակի է՝ օրէնսդրական և դատաւորական: Սակայն թէպէտ և նա պահանջում է բարին ու դաւում է չարը, բայց մեղքի իշխանութիւնից և մեր էութեան մէջ եղբ բարոյական հակառակութիւնից մեզ փրկելու կարողութիւնը ունի: Նա մեր առաջն է դնում բարոյականութեան նախագաւառ,

բայց նորա կատարման բարոյական ոյժը չէ տալիս. բաց է անուամեր մեղքը, բայց ազատ չէ կացուցանում մեզ նորանից, ցոյց է տալիս մեզ այն ներքին երկպառակութիւնը, որի մէջ գտնուում ենք, բայց նորանից վեր մեզ չէ բարձրացնում, կարող է մեր մէջ տենչ զարթեցնել ազատութեան՝ ճշմարիտ բարոյական ազատութեան, բայց այս տենչն յազուրդ չէ տալիս և չէ հասցնում մեզ մեր գոյութեան նպատակին: Արարչութեան մնացորդն է սա. բայց փրկագոծութեան միջոցը չէ:

Նոյնքան սակաւ եւ օրէնքը: Հեթանոսական աշխարհի խիղճը պարփակուած է իւր օրէնադրութիւնների մէջ: Ամենուրեք այս օրէնքների համար աստուածային հեղինակութիւն են փնտռել կամ հնարել: Այստեղ այն գիտակցութիւնն է արտայայտուած, որ օրէնքը իւր վերջնական հիմն ու նեցուկը Աստուծոյ կամքի մէջ է գտնում և մարդկային կամքի կամայականութիւնը մէջտեղից պէտք է վերցուի:

Այն ինչ որ փափագում և հնարում էր հեթանոս աշխարհը, Իսրայէլի մէջ իրողութիւն է եղել: Իսրայէլի օրէնքը աստուածային կամքի յայտնութիւն է, դորանով դարձել է նա ժողովրդի առարկայական խիղճը, որի վերայ նորա բարոյական գիտութիւնն ու մտածողութիւնը մաքրուում էր և կազմուում: Եթէ Իսրայէլի մէջ մի այնպիսի՝ շատ աւելի մաքուր և ճշմարիտ բարոյական գիտակցութիւն ենք գտնում, քան նոյն իսկ Յունաստանում և Հռոմում, նա իւր օրէնքին է պարտական այդ:

Թէպէտ ըստ իւր արտաքին ձևի այդ օրէնքը Իսրայէլի և նորա ժողովրդական կեանքի ազգային հաստատութիւն է և այդ պատճառով այս ազգի համար միայն և ոչ բոլորի, և անցողական ոչ թէ մնայուն նշանակութիւն ունեցող բայց իւր բովանդակութեամբ՝ այլ և այլ քաղաքացիական և արարողական արտաքին կարգերի հիմքը կազմելով հանդերձ յաւիտենական և ընդհանրական նշանակութիւն ունի նա. զի Աստուծոյ բարոյական կամեցողութեան արտայայտութիւնն է. ինչպէս որ սա մեր սեփական բարոյական գիտակցութեան հիմքն է կազմում՝ միայն զտաճ բոլոր այն շփոթութիւններից ու եղծումներից, որոց են թակայ է միշտ մարդու բարոյական

գիտակցութիւնը: Այսպէս ուրեմն նորա կոչումն է նաև մեր խրդ-
 ճին օգնութեան հասնել և օժանդակել նորա գործին մեր մէջ՝ իբրև
 մարդկութեան մեծ առարկայական խիղճը: Ինչքան և պարզ են
 հնչում տաան պատուիրանները, բայց և այնպէս ազգերի ամբողջ
 գրականութեան մէջ չկայ ոչինչ, որ մաքրութեան, լրջութեան, բա-
 րոյական գիտակցութեան ընդհանրականութեան կողմանէ՝ ինչպի-
 սին սոքա են պարունակում, նոցա հետ համեմատել կարելի լինէր:
 Նոքա ամենապարզ, բայց և միանգամայն ամենավսեմ համառօ-
 տութիւն են բարոյագիտութեան: Մի զարմանալի գիծ իջեցնում
 է սա Աստուծոյ սրտից մարդու սիրտը՝ այնտեղ է ամենայն օրինաց
 լրման աղբիւրը, այստեղ ամենայն օրինաց զանցառութեան աղ-
 բիւրը: Զի սկսում է Աստուծոյ և Նորան սիրելու պահանջից, որի
 սիրով փրկուած ենք մենք և վերջացնում է սրտի չար ցանկու-
 թեամբ և Նորան իշխել չթողնելու պահանջով: Սորանով ասած ենք
 լինում, թէ օրէնքի ամեն կատարումն առ Աստուած ունեցած սիրոյ
 մէջ ունի իւր սկիզբը՝ մինչ սէրը հաւատոյ վերայ է հաստատուած,
 ամեն մի զանցառութիւն սրտի չար ցանկութեան մէջ է, երբ Աս-
 տուած մոռացուած է:

Այս պատճառով ինչքան և արտաքին ուղղութիւն ունին ըստ
 երևութին պատուիրաններն, այնքան ներքին է սակայն նոցա իմաս-
 տը:

Եւ եթէ նոցա իմաստը մեզ համար անորոշ իսկ լինէր, չէ որ
 Քրիստոս, ինչպէս գիտէք, լերան քարոզի մէջ բաւական պարզ բա-
 ցատրել է այն մեզ: Միայն գործը չէ Աստուծոյ կամքի կատարումն
 և գործով չէ սկսում նախ Աստուծոյ կամքի զանցառութիւնը,
 այլ երկունս ևս իրենց սկիզբն ու բնականութիւնը սրտի մէջ ունին,
 և բոլոր մասնաւոր պահանջումները ամփոփուած են մէկի մէջ —
 Աէր առ Աստուած:

Սակայն պահանջը կատարումն չէ, և ոչ գաղափարը իրականու-
 թիւն: Օրէնքը պարունակում է պահանջն ու գաղափարը, բայց
 ինչպէս ենք հասնում իրականութեան: Օրէնքը ասում է մեզ, թէ
 ինչ պէտք է անել, օրէնքը պատժում է երբ զանցառու ենք զրո-
 նում, օրէնքը մեզ դաստիարակում է և վարժեցնում է իշխել

մեզ վերայ: Բայց ամենագորեղ ինքնիշխանութիւնն ևս ներքին տրամադրութեան յեղաշրջումն չէ և օրէնքի ու Հակման Հակադրութիւնից մեզ դուրս չէ Հանում: Այս պէտք է լինի ճշմարիտ բարոյականութիւնը, որ չէ կարող դուրս գալ այն ճշման տակից, որ մենք ինքեներս մեզ վերայ զգել ենք, և որ պարտքի պատուէրից բարձր բան չգիտէ: Ճշմարիտ բարոյականութիւն այնտեղ է միայն ուր ազատութիւն կայ, իսկ ճշմարիտ ազատութիւն՝ սէրն է առ Աստուած: Բայց օրէնքը չէ այդ առաջ բերողը, այլ այն նորոգիչ Հոգին, որ Քրիստոսից ելնում է և մարդուս դարձնում է քրիստոնեայ:

(Թարգմ.) Կ. ՍԱՐԿԱՒԱԳ.

Ծան. Այս հատուածը Թարգմանուած է Լայպցիգի համալսարանի ուսուցչապետ աստուածաբանութեան և փիլիսոփայութեան դոկտոր՝ Լուիսթրիի «Հրապարակախօսութիւններ քրիստոնէութեան բարոյագիտութեան մասին» գրքից՝ Բ. գլուխն ամբողջապէս: Այդ պատկառելի ծերունին, ի թիւս ուրիշ գործերի ունի չորս հատոր «Հատագողական հրապարակախօսութիւններ քրիստոնէութեան մասին», որի Գ. հատորն է վերոյիշեալ գիրքը. իսկ ամենից աւելի ժողովրդական է Ա. հատորը՝ «Քրիստոնէութեան հիմնական ճշմարտութիւնների մասին», որ տասն և մէկ հրատարակութիւն է ունեցել, իսկ ամբողջ զրուածքը Թարգմանուել են եւրոպական գրեթէ բոլոր յայտնի լեզուներով՝ նոր յղմանքն ևս, Եւ յիրաւի այդ գրուածքը, ամեն մի որոշ աստիճանի կրթութեան տէր մանաւանդ թէ սխալ կրթութեան թղյներով վարակուած քրիստոնեայ հասարակութեան համար շատ օգտակար և առողջարար ազդեցութիւն կարող է ունենալ: